«ՇԻՐԱԿԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Գյումրու թիվ 18 միջնակարգ դպրոց

Առարկա՝ Կենսաբանություն

Թեմա՝ **Դասի պլանավորման փուլերը և վերլուծության մոտեցումները :**

Ուսուցիչ՝ Մուրադյան Հռիփսիմե

Ղեկավար՝ Կարինե Ալեքսանյան

Գյումրի 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն----------3

Գլուխ առաջին: **Դասի պլանավորման փուլերը----------5**

Գլուխ երկրորդ: Դասի վերլուծության մոտեցումները ----------16

ԳԼՈՒԽ Երրորդ: Դասի վերլուծության և գնահատման սկզբունքները:
Եզրակացություն----------19

Օգտագործված գրականության ցանկ----------21

.

Ներածություն

Լավագույն ուսուցիչները նրանք են, որոնք մտածում են, թե ինչ են անելու դասարանում և ինչպես են անելու, ինչպես են կազմակերպելու ուսուցումն ու դասավանդումը: Ինչ սկզբունքներով են առաջնորդվելու, ինչ մեթոդներ են օգտագործելու: Յուրաքանչյուր դաս առանձնահատուկ է և պահանջում է տարբեր մոտեցում: Շատ կարևոր է կարողանալ աշակերտներին ներգրավել դասպրոցեսում, դասը հետաքրքիր դարձնել նարնց համար: Այնպես անել, որ աշակերտները դպրոց գան սովորելու և ոչ թե զվարճանալու համար:

Դասի պլանը դասի քարտեզն է, այն ցույց է տալիս, թե որտեղ եք կանգնած, որտեղ եք վերջացնելու: Առանց պլանի դասը նման է քառսի, երբ սովորողը հստակ պատկերացում չի ստանում թե իրենք դասի ժամանակ ինչ արեցին և ինչու:

Պլանավորման միջոցով ուսուցիչը կարժանանա սովորողների հարգանքին: Լավագույն ուսուցիչները պլանավորում են իրենց դասերը:

Մեր աշխատանքը նվիրված է դասի պլանավորման և վերլուծության տեսակներին :

Դասի վերլուծության տեսակներն են՝

1. Ամբողջական վերլուծություն:
2. Կառուցվածքային (փուլային) վերլուծություն. դասի առանձին փուլերի բացահայտումը և գնահատումն է, դրանց կառուցվածքի նպատակահարմարությունը, որն ապահովում է սովորողների ճանաչողական ունակությունների զարգացումը:
3. Կառուցվածքա-ժամանակային վերլուծություն. սա դասի յուրաքանչյուր փուլի անցկացման ժամանակի բաշխման գնահատումն է:
4. Դասի դաստիարակչական ուղղվածության վերլուծություն. սա սովորողների անձնային որակների դաստիարակմանը նպաստող ուսումնական նյութի օգտագործման առավել արդյունավետ ուղիների բացահայտումն ու գնահատումն է:
5. Համակցված վերլուծություն. սա դասի հիմնական ուսումնական նպատակի և կառուցվածքային տարրերի գնահատումն է:

6.Դիդակտիկական վերլուծություն. սա ուսուցման վերլուծությունն է (ուսուցման սկզբունքների իրականացումը, մեթոդների ընտրության, դպրոցականների ուսուցման և ուսումնառության միջոցների և հնարների, ուսումնական նյութի մշակումը, ինքնուրույն ճանաչողական գործունեության մանկավարժորեն ղեկավարումը և այլն):

7. Հոգեբանական վերլուծություն. սա դասի ընթացքում հոգեբանական պահանջների կատարման ուսումնասիրումն է (սովորողների ճանաչողական գործունեության զարգացման ապահովում):

Գլուխ Առաջին: Դասի վերլուծության տեսակները և մոտեցումները:

Ամբողջական վերլուծությունը վերլուծությունների համակարգ է, որն իր մեջ ներառում է դասի իրականացման խնդիրները, սովորողի ուսումնական գործունեության տեսակներն ու բովանդակությունն այնպիսի բնութագրիչներով, ինչպիսիք են սովորողների գիտելիքների և մտավոր գործունեության ձևերի յուրացման մակարդակը, սովորողների զարգացումը, ուսուցման սկզբունքների իրականացումը, դասի արդյունավետությունը:

ԴԱՍԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՍԽԵՄԱ

1. Դասի խնդիրները, նպատակը (կրթական, զարգացնող, դաստիարակչական), դրանց փոխկապակցվածության և իրագործման ուղիները:
2. Ուսուցչի և սովորողների պատրաստվածությունը դասին, դասի կահավորանքը, ուսումնադիտողական պարագաները, դասարանի սանիտարահիգիենիկ վիճակը և այլն:
3. Կազմակերպական կառուցվածքը. դասի տիպը, դրա տեղն առարկայի դասընթացում, դասի փուլերի հաջորդականությունը, ժամանակի բաշխումը, սովո¬րողների ճանաչողական գործունեության համապատաս¬խանեցումը դասի փուլերին:
4. Դասի բովանդակությունը, ուսումնական նյութի գիտականությունը, դրա դաստիարակչական և զարգացնող նշանակությունը, նյութի ընտրության գիտականությունն ըստ ծավալի, բովանդակության և բարդության աստիճանի, տեսական և գործնական նյութերի հարաբերակցությունը, առանցքային հասկա¬ցությունների առանձնացումը, նյութի և կենսափորձի կապը:
5. Դասի մեթոդական ապահովումը, տարբեր մեթոդների և հնարների կիրա¬ռումը, դրանց համապատասխանեցումը, դրանց ընտրության հիմնավորումը, նպատակամետությունը և արդյունավետությունը, սովորողների պատրաստվածության մակարդակի համապատասխանեցումը

նյութի բովանդակությանը, ուսուցման սկզբունքների համապատասխանեցումը, ուսումնական աշխա¬տանքի տեմպը դասի ժամանակ:

Դասի տարբեր փուլերի անցկացման մեթոդիկան՝

- սովորողների առջև ճանաչողական խնդիրների առաջադրումը,
- տնային աշխատանքների ստուգումը,
- նոր գիտելիքների հաղորդումը,
- ուսումնական նյութի ամրապնդումն ու ամփոփումը,
- գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգումն ու գնահատումը,
- սովորողների ճանաչողական գործունեության ակտիվացման հնարները (նրանց ընկալումը, հիշողությունը, մտածողությունը, երևակայությունը և այլն),
- սովորողների վերարտադրողական և ստեղծագործական գործունեության կազմակերպումը, դրանց հարաբերակցությունը,
- խնդրահարույց և ծրագրավորված ուսուցման տարրերի կիրառումը (ուսումնական քարտերի, առաջադրանքների օգտագործում),
- անհատական առանձնահատկությունների և սովորողների հետաքրքրությունների հաշվառումը, նրանց պատրաստվածության մակարդակի հաշվառումը, ուսուցման անհատականացման իրագործումը և տարբերակված մոտեցումը,
- սովորողների ինքնուրույն աշխատանքի տարբեր տեսակների կազմակերպումը, դրանց տեղը դասի կառուցվածքում (ստեղծագործական և այլն),
- տնային աշխատանքների հանձնարարումը (առաջադրանքի ձևը, ծավալը),
- դասի ժամանակ դաստիարակող ուսուցումը. անձի համոզմունքների, աշխատանքային, գեղագիտական, ֆիզիկական որակների դաստիարակումը, սովորողների ուսումնառության ընթացքում աշխատանքային կուլտուրայի դաստիարակումը,

- ներառարկայական և միջառարկայական կապերի ապահովումը, դրանց մանկավարժական նպատակահարմարության հիմնավորումը:

6. Դասի ժամանակ սովորողների գործունեությունն ու վարքը.
   - սովորողների վարքը և կարգապահությունը, նրանց վերահսկման մեթոդիկան,
   - ակտիվությունը, ինքնուրույնությունը, տարբեր պատրաստվածության մակա¬դակների դեպքում պարապմունքների նկատմամբ հետաքրքրությունը,
   - դասի տարբեր փուլերի ընթացքում ուշադրության կենտրոնացումը,
   - սովորողների գործունեությունը, նրանց կազմակերպվածությունը, կոկիկությունը,
   - վերաբերմունքը հետ մնացողների և կարգապահության խախտողների նկատմամբ, ամբողջ դասարանի և առանձին սովորողների մասնակցության բնույթը դասի ժամանակ,
   - սովորողների վերաբերմունքն ուսուցչի և միմյանց նկատմամբ (լսելը, վախը, բարյացակամությունը, հարգանքը, փոխադարձ օգնությունը, հուշումը և այլն):

7. Ուսուցչի մասնագիտական որակների բնութագիրը, գիտելիքների մակարդակը, դասին պատրաստվածությունը, սովորողների ուսուցման և դաստիարակության տեսական գիտելիքները, առարկայի ուսուցման մեթոդիկան, դասի ժամանակ այդ գիտելիքները կիրառելու կարողությունը, մանկավարժական տակտը, աշխատանքային ոճը, աշխատանքի և կարգապահության կուլտուրան, ուսուցչի խոսքը, ուսուցչի փոխհարաբերությունը դասարանի և առանձին սովորողների հետ, ուսուցչի հեղինակությունը:

8. Դասի ընդհանուր արդյունքները, իր առջև դրված ընդհանուր կրթական, դաստիարակչական և զարգացնող նպատակների իրականացումը, դասի ընդհանուր գնահատականը, դրա արդյունքները, արդյունավետությունն ու որակը, եզրակացությունն ու առաջարկությունն աշխատանքի հետագա

կատարելագործման հարցում, հաջողությունների ամրապնդումն ու թույլ տված սխալների վերացումը:

II. Կառուցվածքային (փուլային) վերլուծություն. դասի առանձին փուլերի բացա-հայտումը և գնահատումն է, դրանց կառուցվածքի նպատակահարմարությունը, որն ապահովում է սովորողների ճանաչողական ունակությունների զարգացումը:

ԴԱՍԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՍԽԵՄԱՆ

1.Դասի տիպը և կառուցվածքը.

- դասի կառուցվածքը, տիպը,
- դասի թեման, նպատակները (կրթական, զարգացող, դաստիարակչական), առանձին փուլերի ուսումնական խնդիրները,
- ժամաքանակի բաշխումը:

2.Ուսումնական նյութի կրկնության բովանդակությունը և մեթոդիկան.

- ստուգման խորությունն ու ծավալը,
- կրկնողության մեթոդիկան, առաջադրանքների տարբերակվածությունը,
- աշակերտների ներգրավումը ստուգման գործընթացում, դասարանի զբաղվածությունը,
- գնահատման օբյեկտիվությունը, պատճառաբանումը:

3.Աշխատանքը նոր ուսումնական նյութի հետ.

- ծրագրային պահանջները,
- գիտականությունը, կապը կենսափորձի հետ, մատչելիությունը, ուսումնական նյութի գլխավորի և երկրորդականի հարաբերությունը,
- նյութի համապատասխանեցումը դասի կրթական, զարգացնող, դաստիա¬րակչական խնդիրներին:

4.Ուսուցման մեթոդները.

- դասի հագեցվածությունը զննական պարագաներով, դրանց կիրառման նպատակահարմարությունը,
- կիրառվող մեթոդների հիմնավորվածությունը,
- սովորողների ճանաչողական գործունեության ակտիվացումը,

- խնդրահարույց ուսուցման մեթոդների կիրառումը,
- սովորողների հետ ընդհանուր ու անհատական աշխատանքի ձևերի հարաբերակցությունը,
- սովորողների ինքնուրույն աշխատանքը,
- սովորողների գիտելիքների ստուգումը և հաշվառումը նոր նյութի հաղորդման ընթացքում:

5.Նոր նյութի յուրացումը.

- գիտելիքների, կարողությունների, հմտությունների ձևավորման նպատակով նյութի ընտրությունը,
- ինքնուրույն աշխատանքն ամրապնդման ընթացքում,
- հետադարձ կապի ապահովումը, սովորողների պատասխանի գնահատումը:

6.Տնային առաջադրանք.

- նյութի բնույթը, ծավալը, մատչելիությունը,
- հրահանգի առկայությունը և բնույթը,
- առաջադրանքների տարբերակվածությունը:

7.ՈՒսուցչի գործունեության բնութագիրը.

- մանկավարժական պահանջները սովորողների աշխատանքի, ինչպես նաև նրանց խոսքի նկատմամբ,
- ուսուցչի խոսքը, նրա պահվածքը, փոխհարաբերությունն աշակերտի հետ:

8.Դասի արդյունքները.

- դասի վերջնարդյունքների ամփոփում,
- դասի նշված պլանի կատարում,
- դասի կրթական, զարգացնող, դաստիարակչական նպատակների իրականացում,
- սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների որակը:

III. Կառուցվածքա-ժամանակային վերլուծություն. սա դասի յուրաքանչյուր փուլի անցկացման ժամանակի բաշխման գնահատումն է:

ԴԱՍԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ-ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՍԽԵՄԱՆ

1. Ամբողջ ժամանակի (45ր) արդյունավետ բաշխումը դասի առանձին փուլերի միջև, տրամաբանական է, նպատակահարմար է, արդյոք, տվյալ պայմաններում հատկապես այդքան ժամանակ տրամադրել հարցմանը, նոր նյութի ընկալմանը, նոր նյութի բացատրմանը, ամրապնդմանը և տնային առաջադրանքների հանձնարարմանը:

2. Դասի կառուցվածքային յուրաքանչյուր փուլի արդյունավետ իրականացումը. այդ փուլերից որի ժամաքանակը կարելի էր կրճատել կամ ավելացնել և ինչու:

3. Ժամաքանակի բաշխումը դասի առանձին կառուցվածքային փուլերի ներսում. որքան ժամանակ է տրամադրվել նոր նյութի յուրացմանը, դասի որ ժամանակամիջոցում է դա կատարվել (սկզբում, վերջում, ընթացքում), ինչպես է այդ դեպքում անցկացվել նոր նյութի յուրացմանը նպաստող հոգեբանական նախապատրաստումը, դրա հաղորդումը, ամրապնդումը: Ճիշտ նույն ձևով էլ վերլուծվում է դասի այնպիսի բաղադրիչների իրականացումը, ինչպիսիք են՝ սովորողների հարցումը, ստուգումը և տնային առաջադրանքը:

4. Դասի առանձին փուլերի ընթացքում ժամաքանակի որակական օգտագործումը: Օրինակ. որքանո±վ արդյունավետ օգտագործվեց նոր նյութի հաղորդման, հարցման ժամանակը, ինչպե±ս աշխատեց այդ ընթացքում դասարանը, որքա±ն ժամանակ խոսեց ուսուցիչը:

5. Ուսուցման մեթոդների և հնարների արդյունավետ կիրառումը. ինքնուրույն աշխատանքները, հարցման ձևերը, զրույցների այս կամ այն տեսակները որքանո±վ են նպատակահարմար այդ պայմաններում և այլն:

6. Նյութի բովանդակության և այն մեթոդների միջև կապի տրամաբանությունը, որոնց օգնությամբ այն հաղորդվել է և յուրացվել:

IV.Դասի դաստիարակչական ուղղվածության վերլուծություն. սա սովորողների անձնային որակների դաստիարակմանը նպաստող ուսումնական նյութի օգտագործման առավել արդյունավետ ուղիների բացահայտումն ու գնահատումն է:

ԴԱՍԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՍԽԵՄԱՆ

1.Նյութի բովանդակության դաստիարակչական հնարավորությունների օգտագործում:

2.Ուսումնական նյութի լրացում պատմական փաստերով:

3.Դասի ժամանակ աշխարհայացքի ձևավորում:

4.Անձի բարոյական որակների ձևավորում:

5.Սովորողների մոտ աշխատանքի և ուսուցման նկատմամբ բարեխիղճ վերաբերմունքի դաստիարակում:

6.Ուսուցման մեթոդների և հնարների դաստիարակչական հնարավորու¬թյունների գնահատում:

7.Սովորողների աշխատանքի գնահատման դաստիարակչական հնարավորու¬¬թյունների օգտագործում:

8.Ուսուցչի անձնական օրինակի ներգործություն:

V.Համակցված վերլուծություն. սա դասի հիմնական ուսումնական նպատակի և կառուցվածքային տարրերի գնահատումն է:

ԴԱՍԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՍԽԵՄԱՆ

1.Դասի կազմակերպում. պլանի առկայություն, տեխնոլոգիաների կիրառման արդյունավետությունը, ինչպես նաև դիտողական և ուսումնական պարագաների օգտագործման արդյունավետությունը, դասի հոգեբանական և հիգիենիկ պահանջների իրականացում, հետադարձ կապը, տետրերի գրառումը, դասի փուլերի միջև ժամաքանակի բաշխումը:

2.Ուսուցչի անձնային որակները. բարոյահոգեբանական մթնոլորտը, հետաքրքրվածության աստիճանը, բարեհամբույր և նրբազգաց վերաբերմունքը սովորողների նկատմամբ, մանկավարժական կուլտուրան, առարկայական գիտելիքները, տակտը, խոսքը, արտաքին տեսքը:

3.ՈՒսուցման արդյունավետությունը. գիտական սկզբունքների իրականացման աստիճանը, ճկունությունը, գիտելիքների նկատմամբ վերլուծական մտածողության դրսևորումը, մատչելիությունը, խնդրահարույց իրավիճակների ստեղծումը, ուսուցման կապը կենսափորձի հետ, դասի գլխավոր ուսումնական նպատակի իրականացման աստիճանը, ուսուցման մեթոդների և հնարների արդյունավետությունը, սովորողների գիտելիքների ստուգման արդյունա¬վետությունը, տնային առաջադրանքները:

4.ՈՒսուցչի դաստիարակչական գործունեության արդյունավետությունը. դասի բարոյական ուղղվածությունը, կարողությունների ձևավորումը, ուսուցման, դաստիարակության և զարգացման միասնականությունը, գեղագիտական, ֆիզիկական հիգիենիկ դաստիարակությունը:

5.Սովորողների գործունեության արդյունավետություն. ինքնուրույնության ու ակտիվության սկզբունքների, ինչպես նաև զարգացնող ուսուցման սկզբունքների իրականացումը, սովորողների աշխատունակությունը, աշխատասիրությունը, ինքնուրույն աշխատելու հմտությունները, ուսումնական նյութում գլխավորն առանձնացնելու կարողությունները, պատասխանի պլանավորումը, իր և ընկերոջ կատարած աշխատանքի վերլուծությունը, գրավոր խոսքին հատուկ հմտություն¬ների զարգացումը, սովորողների բարեկրթության մակարդակի բարձրացումը, սովորողների կազմակերպվածությունն ու կարգապահությունը, արտաքին տեսքը:

VI.Դիդակտիկական վերլուծություն. սա ուսուցման վերլուծությունն է (ուսուցման սկզբունքների իրականացումը, մեթոդների ընտրության, դպրոցականների ուսուցման և ուսումնառության միջոցների և հնարների, ուսումնական նյութի մշակումը, ինքնուրույն ճանաչողական գործունեության մանկավարժորեն ղեկավարումը և այլն):

ԴԱՍԻ ԴԻԴԱԿՏԻԿԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՍԽԵՄԱՆ

1. Տնային հանձնարարության մանրամասն վերլուծություն:
2. Անցած նյութի ստուգման ժամանակ ուսուցչի կողմից կիրառվող մեթոդներն ու դիդակտիկական հնարները, դրանց համապատասխանեցումը դրված նպատակին:
3. Առաջադրանքի ստուգման համար կիրառվող մեթոդների և հնարների ուսումնական արժեքը, դրանց դաստիարակչական նշանակությունը:
4. Սովորողների գիտելիքների որակը:
5. Գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգման ժամանակ դասարանի ակտիվացման ձևերը:
6. Այդ փուլում սովորողների կարգապահության վերլուծությունը:
7. Նոր նյութի հաղորդման կամ անցած թեմայի ամրապնդման վերլուծությունը, ուսուցչի կողմից նյութի հաղորդման պարզությունը և մատչելիությունը, մեթոդների կիրառումը և դրանց համապատասխանեցումը դասի խնդիրներին, կիրառվող ուսուցման միջոցները, դրանց նպատակահարմարությունը:

8. Ամբողջ դասի ընթացքում ուսումնական սկզբունքների իրականացումը:

9. Սովորողների մտքի աշխատանքի ակտիվացման համար ուսուցչի կողմից կիրառվող հնարները:

10. Դասի վերջին փուլի վերլուծությունը՝ տնային հանձնարարությունը (հանձնարարման ձևը, ծավալը), ժամանակին դասն ավարտելը:

11. Դասի ընթացքում ուսուցչի կողմից դաստիարակչական խնդիրների իրականացումը:

12. Դասի ժամանակ ուսուցչի մանկավարժական պահվածքը:

13. Աշակերտների նկատմամբ անհատական մոտեցումը:

14. ՈՒսումնական գործունեության համար դասարանի կազմակերպումը և կարգապահության պահպանումը:

15. Ինքնատիրապետումը և մանկավարժական տակտը:

16. ՈՒսուցչի ձայնի հնչերանգը, արտահայտիչ խոսքը, տեմպը, դիմախաղը:

VII. Հոգեբանական վերլուծություն. սա դասի ընթացքում հոգեբանական պահանջների կատարման ուսումնասիրումն է (սովորողների ճանաչողական գործունեության զարգացման ապահովում):

ԴԱՍԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՍԽԵՄԱՆ

1. Սովորողների ճանաչողական գործունեության կազմակերպում.

Մտավոր գործունեության և երևակայության զարգացման համար դասի ժամանակ ինչպիսիպայմաններ են ստեղծվել:

Ինչպես է ուսուցիչն իրականացրել ուսումնասիրվող առարկայի ամբողջական, գիտակցված ընկալումն աշակերտների կողմից:Իր աշխատանքում ինչպես ուսուցիչը կիրառեց համոզմունքը, ազդեցությունը:Ինչպես հասավ ուսուցիչն աշակերտների ուշադրության կենտրոնացմանը:Ինչ արեց ուսուցիչը սովորողների կողմից նյութի առավել արդյունավետ մտապահման համար և դասի ժամանակ դպրոցականների մոտ մեխանիկական ու գիտակցված մտապահման ինչպիսի առանձնահատկություններ ի հայտ եկան:Դասի ժամանակ ինչպիսին են ուշադրության զարգացմանն ուղղված հնարները:Ինչպիսիաշխատանքի ձևեր կիրառեց ուսուցիչը սովորողների մոտ նախկինում յուրացրած այն նյութերը հիշողության մեջ վերականգնելու

համար,որոնք անհրաժեշտ են նոր նյութը հասկանալու համար (անհատական հարցում, զրույց դասարանի հետ, վարժություններ և այլն):
2. Դասի ժամանակ սովորողների երևակայության և մտավոր գործունեության կազմակերպումը գիտելիքների և կարողությունների ձևավորման ընթացքում.

Ինչպես է ուսուցիչը զարգացրել աշակերտների ստեղծագործական երևակայությունը նոր նյութի հաղորդման ժամանակ:Ինչ մակարդակով ձևավորվեցին սովորողների գիտելիքները՝ կոնկրետ, զգայական պատկերացումների, հասկացությունների, ընդհանրական կերպարների, բացահայտումների մակարդակով:Ինչ հնարների օգնությամբ է ուսուցիչը հասել սովորողների ակտիվությանն ու ինքնուրույն մտածողության զարգացմանը. հարցերի համակարգը, խնդրահարույց իրավիճակների ստեղծում, ավելորդ և պակաս տվյալով խնդիրների կիրառումը, դասի ընթացքում հետազոտական աշխատանքի կազմակերպումը, անհատական, զույգերով, խմբային և կոլեկտիվ աշխատանքի ձևերը:Սովորողների կողմից ըմբռնման ինչ մակարդակի հասավ ուսուցիչը. նկարագրական, համեմատակա±ն, ընդհանրակա±ն, գնահատողակա±ն, խնդրահարույց:Ինչպես ղեկավարեց ուսուցիչը համոզմունքների ձևավորումը:Դասի ժամանակ ինչպես զարգացվեց հետաքրքրությունն ուսումնական առարկայի նկատմամբ:
3. Դասի ընթացքում սովորողների գործունեության նկատմամբ անձնական մոտեցում.Ինչ զգացմունքներ ի հայտ եկան դասի ժամանակ երեխաների մոտ և ինչով են դրանք պայմանավորված:Ինչպես իրականացվեց սովորողների հաղորդակցական կարողությունների դրսևորումը դասի ժամանակ:Դասի որ պահին առավել արդյունավետ ձևավորվեցին դպրոցականների կամային որակները:Հաշվի առնվեցին, արդյոք, դասի ժամանակ սովորողների տարիքային և անհատական առանձնահատկությունները: Ինչպե±ս:
4. Ուսուցչի վարպետությունը.

Աշակերտների հետ փոխազդեցության կազմակերպման ուղիներն ու մեխանիզմները, անդրադարձ կատարելու կարողությունը, համոզմունքների արտահայտման համար հոգեբանական պայմանների ստեղծման

կարողությունը, հոգեբանական մթնոլորտը և այլն, ներշնչման կարողությունը՝ որպես մանկավարժական փոխազդեցության մեթոդ, դասի ընթացքում սովորողների միմյանց հետ հաղորդակցումը ղեկավարելու ձևերը, դասին նրա պատրաստվածությունը, աշխատանքային ինքնազգացողությունը դասի սկզբում և ընթացքում (հավաքվածությունը, տրամադրվածությունը դասի թեմայի նկատմամբ, աշխուժությունը, հաստատակամության դրսևորումը դրված նպատակների իրականացման համար, լավատեսական մոտեցումն այն ամենի նկատմամբ, ինչը կատարվում է դասի ժամանակ, նախաձեռնությունը պահի ազդեցությամբ մանկավարժորեն կողմնորոշումը և այլն):

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ: ԴԱՍԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Վերլուծական գործունեության իրագործման ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել ուսումնական պարապմունքի անցկացման հետևյալ սկզբունքները.

Առաջինը գիտականության սկզբունքն է՝ ուսումնական պարապմունքների՝ գիտականորեն հիմնավորված հոգեբանա-մանկավարժական պահանջներով վերլուծությունը: Այն բացառում է այնպիսի արտահայտություններ, ինչպիսիք են՝ <<Սա ինձ դուր է գալիս…>> (թվարկում է այն, թե հատկապես ինչը), <<Սա ինձ դուր չի գալիս>>: Այսպիսի մոտեցումը հիմնավորված չէ և այն արտացոլում է դիտարկողի սուբյեկտիվ կարծիքը: Դասի վերլուծության ընթացքում պետք է կիրառել <<ըստ մեթոդական գրականության...>>, <<ելնելով ժամանակակից դասին ներկայացնող պահանջներից...>> և այլն: Գիտականության սկզբունքը պահանջում է, որպեսզի ուսումնական պարապմունքների վերլուծության ընթացքում դիտարկողը մենաբանի, թե գիտականորեն հիմնավորված պահանջներն ինչպե՞ս են իրականացվում ուսուցչի և աշակերտների կողմից. ամբողջովին, մասնակի, չի իրակա¬նացվում, և, ամենակարևորը, վերլուծի, գիտականորեն հիմնավորի պահանջ¬ների ոչ լիակատար իրականացման պատճառները:

Հաջորդը յուրաքանչյուր կոնկրետ պարապմունքին ներկայացվող նպատակահարմարության պահանջի սկզբունքն է: Փորձը ցույց է տալիս, որ նպատակահարմար չէ բոլոր ուսումնական պարապմունքներին միևնույն պահանջները պարտադրել, օրինակ՝ ուսուցման մեթոդների առումով: Երրորդն օպտիմալ ու չափելի քանակի պահանջների սկզբունքն է: Այս սկզբունքը չպահպանող դիտարկողները դասի վերլուծության ընթացքում չեն առանձնացնում գլխավորն ուսուցչի ուսումնադաստիարակչական գործընթացում, կարևոր ու էական հարցերի շարքում են դասում նաև երկրորդական և ոչ էական հարցերը: Երբեմն միևնույն պահանջները, առանց

որևէ համակարգի, ներառվում են դասի վերլուծության սխեմայի տարբեր բաժիններում:

Չորրորդը համակարգվածության սկզբունքն է: Համակարգված մոտեցման հիմքով վերլուծությունը հնարավորություն է ընձեռում վերլուծել դասի արդյունավետությունն անկախ դրա կազմակերպման ձևից, տեսակից, տիպից կառուցվածքից, ինչ-որ փուլերի առկայությունից և հաջորդականությունից, ուսուցչի կիրառած դիդակտիկ միջոցների և հնարների առկայությունից: Այս սկզբունքի հաշվառմամբ վերլուծությունը հնարավորություն է ընձեռում խորությամբ գնահատել ոչ թե ձևը, այլ բովանդակությունը ինչպես ուսուցչի ուսումնադաստիարակչական գործընթացի, այնպես էլ՝ աշակերտի ուսումնաճանաչողական գործընթացի տեսանկյունից:

Ուսուցչի և աշակերտի անաչառ գնահատման համար կարևոր է հաշվի առնել ոչ թե որքան և ինչ մեթոդներ ու հնարներ, տեխնիկական և դիդակտիկ միջոցներ են կիրառված, այլ որքանով են նպատակահարմար, արդյունավետ և օպտիմալ եղել ուսուցչի և աշակերտի այս կամ այն գործողությունները, որքանով են արդարացված և նպատակահարմար զննական որոշակի միջոցների կիրառությունը:

Հաշվի առնելով ուսումնական գործընթացի երկկողմանի բնույթը, կարելի է վստահաբար նշել, որ դրա արդյունավետությունը կախված է ինչպես ուսուցչից, այնպես էլ աշակերտից: Որևէ մի կողմի գործունեության նշանակության թերագնահատումն ու գերագնահատումն արդարացի չէ: Այդ իսկ պատճառով, եթե մենք ձգտում ենք ճիշտ գնահատել որևէ ուսումնական պարապմունք, ապա պետք է վերլուծենք և՛ ուսուցչի, և՛ սովորողի գործունեությունը՝ հաշվի առնելով տվյալ պարապմունքի նպատակների իրականացումը: Միշտ անհրաժեշտ է հաշվի առնել նաև յուրաքանչյուր դասի ուսումնական, դաստիարակչական և զարգացնող ուղղությունները, ուսուցչի ուսումնադաստիարակչական գործունեության և սովորողների ուսումնաճա¬նաչողական գործընթացների փոխկապվածությունը:

Եզրակացություն

Դասավարդողի մասնագիտական որակներից մեկը դասը ճիշտ պլանավորելն է, դրա համար անհրաժեշտ է դասի խնդիրների և նպատակների հստակ գիտակցում: Այն ենթադրում է պատասխանել հետևյալ հարցերին՝

- Ի՞նչ սովորեցնել
- Ինչու՞ սովորեցնել
- Ինչպե՞ս սովորեցնել

Ելնելով զարգացող կրթության սկզբունքներից՝ դասավանդողը դասը պետք է պլանավորի այնպես, որպեսզի

- օգնի սովորողին ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերել,
- սովորեցնի սովորել,
- ուսուցման ընթացքում ծանրաբեռնվածությունն ընկնի ոչ թե սովորողի հիշողության, այլ մտածողության վրա,
- ուսուցումը լինի ոչ թե վերարտադրողական, այլ ստեղծագործական գործունեություն:

Սովորողները գիտելիքներ պետք է ստանան ոչ թե պատրաստի ձևով (դասախոսի հաղորդումից, դասագրքից) այլ ինքնուրույնաբար, որոնողական, հետազոտական կամ համագործակցային աշխատանքի արդյունքում, ինչը սովորողների մեջ հետաքրքրություն է առաջացնում, դրական վերաբերմունք ձևավորում ուսման նկատմամբ, նպաստում դժվարությունների հաղթահարմանը, խթանում ստեղծագործական մտածողության զարգացմանը:Մինչև դասը դասավանդողը պետք է փորձի պատասխանել իր դասի նպատակի, խնդիրների, նախադրյալների, գնահատման և ժամաքանակի մասին մի շարք հարցերի:

Հիմնավորում

- Ինչու՞ է դասն արժեքավոր:
- Ինչպե՞ս է այն առնչվում սովորողների արդեն սովորածին, իմացածին և այն թեմային կամ գաղափարներին, որոնք հետագայում պետք է սովորեն:
- Քննադատական մտածողության զարգացման ի՞նչ հնարավորություններ է ընձեռում այս դասը:

Խնդիրներ

- Հատկապես ի՞նչ գիտելիքներ և պատկերացումներ պետք է հետազոտվեն կամ հաղորդվեն:
- Սովորողներն ինչպե՞ս կարող են կիրառել այդ գիտելիքները և պատ-կերացումները:

Նախադրյալներ

- Այս դասն արդյունավետ կերպով յուրացնելու համար սովորողները նախապես ի՞նչ պետք է իմանան կամ արդեն կարողանան անել:

Գնահատում

- Սովորողի իմացության ի՞նչ ապացույցներ է պետք փնտրել:

Ռեսուրսներ և ժամաբաշխում

- Ինչպե՞ս պետք է բաշխվեն ռեսուրսները և ժամանակը առաջադրանքների, վարժությունների և գործողությունների միջև:

Խմբավորում

- Այս դասի համար ի՞նչ սկզբունքով կարելի է սովորողներին բաժանել խմբերի:

Բուն դասը

Ահա մի շարք հարցեր, որոնք կարող են օգնել դասի բուն ընթացքը պլանավորելիս:

Խթանում

- Ինչպե՞ս կարելի է օգնել, ուղղորդել սովորողներին, որ նրանք կարողանան ձևակերպել սովորելու իրենց նպատակներն ու հարցերը և վեր հանել, բացահայտել իրենց նախնական գիտելիքները:

Իմաստի ընկալում

- Սովորողները ինչպե՞ս են հետազոտելու նյութը:

Ինչպե՞ս են վերհսկելու նյութի սեփական ընկալումը:

Կշռադատում

- Սովորողներն ինչպե՞ս կարող են օգտագործել, կիրառել դասից սովորած նոր գաղափարները: Ինչպե՞ս պետք է նրանց ուղղորդել, որ խորհեն նոր գիտելիքի, գաղափարների մասին, գտնեն հարցերի պատասխանները, փնտրեն անորոշ կետերի պարզաբանումները:

Ամփոփում

- Ի՞նչ եզրակացությունների պետք է հանգել դասի ավարտին: Խնդիրները որքանո՞վ պետք է արդեն լուծված լինեն:

Այսպիսով, դասապլանի կազմումը և դրա իրականացումը կարելի է դիտել որպես մի գործընթաց՝ հետևյալ քայլերով.

- նպատակի և խնդիրների ձևակերպում, սովորողների և անհրաժեշտ ռեսուրսների վերաբերյալ տեղեկատվության հստակեցում
- անհրաժեշտ մեթոդների և հնարների ընտրություն, դասի ընթացքի, ուսուցչի և սովորողների գործողությունների պլանավորում
- ուսումնառության ընթացքի և արդյունքների գնահատում:

Դասապլան կազմելիս հարկավոր է հաշվի առնել հետևյալ սկզբունքները.

- դասապլանում հստակեցված է լինելու նպատակը, սպասվող արդյունքները
- գնահատման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել դասի նպատակն ու խնդիրները
- դասապլանում նշված են լինելու դասի համար անհրաժեշտ ռեսուրսները
- դասի ընթացքում հրահանգավորումը լինելու է հստակ և այն համապատասխանելու է սովորողների ուսումնառության մակարդակին
- դասի ընթացքում սովորողի գործողությունները հիմնականում ուղղված են լինելու դասապլանում նշված նպատակներին:

Օգտագործված գրականության ցանկ

1.Ա. Հ. Սվաջյան և ուրիշներ: <<Ուսուցչի օգնականի ձեռնարկ>>, մեթոդական ուղեցույց: Երևան 2022

2.Լաուրա Ասատրյան և Գրետա Հակոբյան << մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն>> ուսումնական ձեռնարկ, ԵՐԵՎԱՆ Արտագերս 2011:

3.Ս. Սարուխանյան, Ա. Դալլաքյան, Ն. Դիշաղաջյան, մեթոդական ձեռնարկ 2008 թ. Վանաձոր:

4.Սերոբ Խաչատրյան << ՈՒսուցման արդյունավետ հնարներ >> Երևան Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան 2020